Զրույց Ալենի հետ՝ Հավատո Հանգանակների մասին

Ալենը Մալագայից է (Իսպանիա): Մենք նրան որոշ հարցեր ուղղեցինք այն մասին, թե նա ինչպես սովորեց Հավատո Հանգանակը:



Պատմեք մեզ ձեր մասին

Ես ութ տարեկան եմ: Երբ մեծանամ, ուզում եմ հայտնի գիտնական դառնալ: Իմ սիրելի գույնը նարնջագույնն է, իսկ իմ սիրելի ուտելիքը՝ *tortillas de patatas*՝ (իսպանական ձվածեղ), որ պատրաստում է տատիկս:

Ինչպե՞ս եք սովորել Հավատո Հանգանակները

Ես սկսել եմ սովորել դրանք Երեխաների միությունում: Մենք երգում էինք երգեր, որոնք օգնում էին մեզ անգիր սովորել դրանք: Երբեմն մեր ուսուցիչները դրանք գրում էին գրատախտակին և ջնջում որոշ բառեր: Մենք նաև նկարներ էինք նկարում՝ բացատրելու համար, թե ինչ նշանակություն ունի Հավատո Հանգանակներից յուրաքանչյուրը:

Ես նաև սովորեցի դրանք՝ կրկնելով ընտանիքիս հետ մեքենայով դպրոց գնալու ճանապարհին: Ես օգնում եմ իմ փոքր քրոջը՝ Մայային, նույնպես սովորել դրանք: Նա արդեն գիտի առաջին վեց հանգանակները:

Հավատո Հանգանակներից ո՞րն է ձեր սիրելին

Ես սիրում եմ իններորդը: «Մենք հավատում ենք այն ամենին, ինչ Աստված հայտնել է, այն ամենին, ինչ Նա այժմ հայտնում է, և հավատում ենք, որ Նա դեռ շատ մեծ ու կարևոր բաներ է հայտնելու Աստծո արքայության վերաբերյալ»: Այն ուսուցանում է, որ Երկնային Հայրը ավելի շատ բաներ ունի, որոնք մենք պետք է աստիճանաբար սովորենք:

ՆԿԱՐՆԵՐԸ՝ ՋՈՐԻ ԼԱՅՈՆՄՈՒՐ

Ինչպե՞ս է ձեզ օգնել Հավատո Հանգանակների իմացությունը

Մի օր դպրոցում ընկերուհիս՝ Սոֆյան, հարցրեց ինձ, թե ինչին եմ ես հավատում և արդյոք որևէ կրոնի եմ պատկանում: Ես հիշեցի Հավատո Հանգանակներից առաջինը. «Մենք հավատում ենք Աստծուն՝ Հավերժական Հորը, և Նրա Որդուն՝ Հիսուս Քրիստոսին, և Սուրբ Հոգուն»: Այսպիսով, ես կիսվեցի դրանով նրա հետ:

Ես նաև ասացի նրան, որ ես քրիստոնյա եմ և Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամ: Նա լսեց ինձ և հասկացավ իմ ասածները:

Ի՞նչ եք զգացել այդ փորձառությունից հետո

Ես ինձ շատ լավ էի զգում, որովհետև գիտեի, որ համարձակ գտնվեցի՝ իմ համոզմունքներով կիսվելով ընկերոջս հետ: Հավատո Հանգանակները սովորելու իմ ջանասեր աշխատանքի շնորհիվ ես կարողացա կիսվել ավետարանով և իմանալ, թե ինչ ասել: